

կ'ունենան, որ առջեկի կողմէն դէպ 'ի ետևի կողմը կը բարձրացընեն զանոնք: Ալէ կոծութեանց միջոց ալիքներ տեսնուած են 60 մեդր բարձրութեամբ:

Պայքալիճը ձեւացած է այն տեսակ հրաբխային ձնշմամբ մը, որովոր լասպից ծովը ձեւացած է: Իր ներկայացուցած արտաքոյ կարգի երեսոյթները բազմաթիւ են, որոնք քանի մը տարիէ 'ի վեր մանրամասն քննութեանց առիթեղան, և որոնց գլխաւորները յօդուածիս մէջ դրինք:

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Զինաստանի բնակչաց թիւր:

Զինաստանի ընդարձակ պետութեն բնակչաց թուոյն վրայ ինչուան հիմաստոյգ տեղեկութիւն մը չկար, եղածներն ալ իրենց հնութեամբը այսօրուան օրս այնչափ յարգ մը չունէին: Իստ վերջին աշխարհագրին, զոր 1815 տարւոյն ընել տուաւ Վիա-Վինկ կայսը, Հինաստանի ու իր գաղթականութեանց բնակիչները 363,784, 360<sup>6</sup> կը հասնէին: Ի՞ստ հաշուին մէջ չէին մոներ հարկատու երկիրները, ինչպէս Դաշնչին, Դան-Վինկ, և այն:

Ի՞ստ միջոցէն ետքը՝ ժողովուրդը խիստ զգալի կերպով բազմացաւ: Վիա-Վինկ կայսեր յաջորդը, որ 1820<sup>6</sup>ն կայսերական գահը ելաւ, նոր աշխարհագիր մը պատուիրեց որ ըլլուի: բայց գործոյն լրումը չտեսած՝ վախճանեցաւ 1840<sup>6</sup>ն:

Ի՞րդի կայսրն ալ փոյթ տանելով այս բանիս, ուրիշ երրորդ աշխարհագիր մը սկսաւ 1842<sup>6</sup>ն, որ յետ քանի մը անգամ ընդհատելու, վերջապէս 1857<sup>6</sup>ն սկիզբը լմինցաւ: Ի՞ստ հաշուին համեմատ՝ 415 միլիոն բնակիչ ունի Զինաստան: Եւ թէպէտ ըստ ստուգագոյն կարծեաց հմուտ մարդիկներու աս հաշուէն 6-8 միլիոն մը վերցընելու է, սակայն գարձեալ 400 միլիոնէն աւելի կ'իյնայ:

Խակ Ռեքին մայրաքաղաքին բնակչաց թիւը աւելի ձիշդ կը սեպուի: և է 1,648,814 հոգի: Եւ թէ որ քաղաքին հետ առնուին իր արտաքին արուարձաններն ու Տաշին և Ան-թիչ ըստուած քաղաքագիւղերն ալ, զորոնք Զինք մայրաքաղաքին մաս կը համարին, բնակչաց թիւը կ'ելէ 2,553,159 հոգի:

Զինաստանի վարի աստիճանի մարդկանց անհրաժեշտ ընկեր ըլլալով աղքատութիւնը, գինովութիւնը գրեթէ ձանցուած ախտ չէ աս ազգին մէջ: Փոխադրական հիւանդութիւնները, բաց 'ի ծաղկէն, շատ նուազ են հոն. ուրիշ կողմանէ ալ չին կանանց որդեննութիւնը անհաւատալի կերպով բեղնաւոր է: Իսով դիւրին է հասկընալը թէ այսպիսի երկրի մը բնակիչներուն թիւը օր օրուան վրայ արտաքոյ կարգի համեմատութեամբ կ'ածի ու կ'աւելնայ:

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենանդրի կատակերգուրեանց մեացորդները:  
( Ցես երես 250 )

Վանի որ դեռ երիտասարդ ես, մի մոռնար որ օր մը ծեր պիտի ըլլաս:

Վարդ մը չեմ ձանչնար որ իր անձին բարեկամ ըլլայ:

Վեզմէ աւելի տարիք ունեցող մարդկանց ընկերութիւնը սիրէ:

Խմաստնոյն խորհուրդներն ընդունէ:

Ոիրէ աշխատութիւնը, և աղեկ կեանք մը կ'անցընես:

Վու անձիդ վրայ գովեստ մի խօսիր:

Պղտիկ շահերու համար շատ անգամ մարդ մեծ կորուստներու մէջ կ'իյնայ:

Լրախտագիտութիւր բոլորովին վերցուած է մարդկանց մէջէն:

Վեղեցիկ բան է յաղթել իր ախորժակին ու իր փափագներուն:

Ծաէ որ մեռնելէն կը վախնաս, մի հարստնար:

Ո՞ղեկան սովորութիւնները շատ կը հեռացընեն զմարդ լուսուծմէ :

Լոյն մարդն որ գէշ գործք մը կ'ընէ՝ ոչ երբէք լուսուծոյ տեսութենէն կըրնայ փախչիլ :

Ո՞ւահկանացու ես, մեռելոց վրայ մի ծիծաղիր :

Լաւագոյն է ցամաքի վրայ աղքատ ըլլալ՝ քան թէ ծովու վրայ հարուստ :

Շերմակ մազերը տարիքի նշան են, ոչ թէ իմաստութեան :

Շատ մարդիկ թշուառ են կանանց պատճառաւ :

Երիտասարդներու խումբի մը մէջ՝ ձանձրանալի է ծեր մը :

Կաև իմաստունն իսկ ամէն պաշտօնի յարմար չէ :

Երբոր մենք նաւ կը մոնանք չորս օրուան ձամբորդութիւն մը ընելու համար, առաջուցմէ կը հոգանք կը պատրաստենք այն բաներն որ աս օրերուն մէջ մեզի հարկաւոր կրնան ըլլալ. բայց երբոր պէտք է որ քիչ մը խնայութիւն ընենք մեր ծերութեան ժամանակին համար, ամենելին ետեւ չենք ըլլար աս ձամբուն համար պաշար ժողվելու :

Ուղղ հարուստը զիս նեղէ, բայց ոչ աղքատը. աւելի դիւրին է անսնց բըռնաւորութեանը համբերել, որոնք մեզմէ վեր են :

Երբոր թշուառութիւնը վրայ կը հասնի, բարեկամները կը հեռանան :

Ո՞ւահկանացու ես, անմահ ատելութիւններ մի պահեր սրտիդ մէջ :

Համանակը գուրս կը հանէ զՃմարտութիւնը :

Եթութիւնը հարստութիւն մըն է՝ որ ոչ ինչ կը հանայ մարդկանց ձեռքէն յափշտակել զայն :

Լաւագոյն է մարմնով հիւանդ ըլլալ՝ քան թէ հոգւով :

Կամոն մը զիր քեզի որ ամենուն հանց ըլլաս ու միայն քեզի անհաճոյ :

Ծրդար մարդը ոչ երբէք հարուստ է :

Ինութիւնը կանանց ձեռքը չտար զիշխանութիւնը :

Մուսնութիւնը թշուառութիւն մըն

է զոր մարդիկ փափագանօք կը հրաւիրեն իրենց :

Լաւագոյն է ըստ իս տգեղ գէմք մը՝ քան թէ չար լեզու մը :

Դանա խաղաղեցընել և ոչ թէ գըր գուելայն բարեկամներդ որ իրարու հետ կը վիճին :

Յանդզնութիւնը, սիրելիդ իմ, խելացի մարդու գործք չէ :

Լոյնպիսի մարդիկ ալ կը գտնուին՝ որ իրենց բարերարները կ'ատեն :

Տանտէրը գերդաստանին գերին է :

Ծրդարութիւնն աչք մը ունի որ ամէն բան կը տեսնայ :

Ոչ ինչ այնչափ կարեկցութեան արժանի կ'երևայ ինծի, որչափ բարեկամի մը թշուառութիւնը :

Երկար տարիքը շատ թշուառութիւններ կը բերէ մարդուս գլուխը :

Ինչպէս որ սուրը կը վիրաւորէ մարմինը, ասանկ խօսքերն ալ կը վիրաւորեն զհոգին :

Մէն տեղ օտարականը երկրին օրէնքներուն հպատակի :

Ոիէ որ մտացի ծնած ես, մէկդի կեցիր գէշ գործողութիւններէ :

Ուութիւնը ամօթալի չէ, հապավյալապար շատախօսութիւնը :

Ո՞ւարդ մը չգտնուիր որուն կեանքը աղատ ըլլայ ՚ի վշտաց :

Ոչ ոք գիտէ մտածածդ, բայց ամէնքը կը կրնան տեսնալ ըրածդ :

Լաւագոյն է երիտասարդաց համար լուել՝ քան թէ խօսիլը :

Շմարիտ բարեկամներդ՝ իբրև եղբարքդ սեպէ :

Լաւագոյն է հիւանդութիւնը՝ քան զտրտմութիւն :

Ո՞ի կարգուիր, չեն թաղեր զքեզ :

Ո՞ւատեմ ես այն աղքատը, որ հարուստին ընծաներ կու տայ :

Ո՞իթը շատ գիտութիւններ կը սորվեցընէ :

Չար մարդու հետ բարեկամութիւն մի ըներ :

Չոռւլութիւնը չկերակրեր զաղքատը :

Համբերէ ընկերի մը ու բարեկամի մը բարկութեանը :

Հեռու կեցիր երդմունքէ , թէ և շմարտութիւնը հաստատելու համար հարկ ըլլայ :

Երբոր երջանկութեան մէջ ես , ըզգոյշ կեցիր մամնաւորապէս հպարտութենէ :

Դուլութիւնը չար մըն է :

Երեսէ մի թողուր աղքատ ու պաղատող ձերը :

Ո՞շտ արթուն կենալու է պարագաներու փոփոխութեանը :

Ի՞ւածինն եղիր օտարականին պատիւ ընելու , և աղէկ բարեկամմը կը սաանաս :

Կնանկ հայր մը ունենալը , որ բարկութեան տեղ՝ խոհեմութիւն ունի , ամենամեծ երջանկութիւն մըն է :

Բնութիւնն որ ամէն բան տուած է մեզի՝ ամէն բան կ'առնէ մեր ձեռքէն :

Թէ որ լեզուդ չբռնես , բանդ գէշ է :

Ո՞արդ մահկանացու , ամէն բանի յուսա՝ մինչեւ 'ի ծերութիւն :

Դեղեցիկ տեսարան մըն է ընտիր բարուք կին մը տեսնելը :

Ի՞սիթք կը ծննթեն զբոնաւորութիւն :

Դատէ ըստ արդարութեան և ոչ թէ ըստ քու շահիդ :

Ո՞արդիկ սովորութիւն ունին օտարականը միշտ նախամեծար սեպելու :

Դահավիժաբար գործելը՝ ստէպ շատ թշուառութիւններ կը բերէ :

Շատ մարդիկ սեղանի բարեկամեն՝ առանց շմարիտ բարեկամմը ըլլալու :

Հարուստ մարդու համար ամէն երկիր հայրենիք մըն է :

Ի՞ւաքինի խորհուրդներ միայն տուր բարեկամներուդ :

Ջիշէ քեզի եղած բարիքները , մոռցիր քու ըրած բարիքներդ :

Ի՞նչպիսի մեծ ընծայ է այն պղտի ընծայն , որ ժամանակին կը տրուի :

Բարեկամն որ իր բարեկամին համար կ'աշխատի , իր անձին համար կ'աշխատի :

Արթութիւնը պատիւ մըն է ամէն մարդկանց համար :

Ո՞քափ ցաւեր կը պատճառեն մեզի մեր հաճոցքները :

Կեղութիւն քաշելու է իր կնոջ ու իր բարեկամին համար :

Բարեկամներդ գովիչ՝ քան թէ զքեզ :

Չար մարդիկ սովորութիւն ունին ամենաչար կոչելու բարի մարդիկը :

Լասկածը ահաւոր տանջանք մըն է :

Դերութիւնը դժուարակիր բեռ մըն է :

Ո՞րդար ծառայութիւններ միայն ընդունէ ու ըրէ :

Կը շարանակուի :

## ԲՆԱԿԱՆՔ

### ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մովային խող :

Դաշտային խող ըսուած ձուկը կիտի կարգէն է , և խնչուան 9 ոտքէն աւելի երկայնութեան կը հանի : Իմէն ծովերու մէջ կը գտնուի , 'ի բաց առեալ Ո՞իթերկրական ծովը . բազմութեամբ մէկտեղ կը քալեն , և սաստկագոյն ալէկոծութեանց միջոց այնպիսի գիւրութեամբ ջրին երեսը կը կտրեն , իբրև թէ խաղաղը լըլլար ծովը : Ի՞նտարակոյս ասոնց շարժմանն ու քալուածքին անհաւատալի արագութիւնը և ջրոյն մէջ ըրած խաղերն ու սատմունքները՝ իրենց մկանանց ուժէն է , և լողի համար ունեցած ընդարձակ գործարաններէն :

Լայս ձկան ամբողջութիւնը երկայնաձև կոնսի մը կը նմանի՝ իր մարմնէն ու պոչէն ձեւացած . գլուխն ալ ուրիշ փոքրիկ կոնսն մը կրնայ սեպուիլ , ու դէպ 'ի աչուլներէն վեր քիչ մը ուռած է : Ոչուլներուն բիրը եռանկիւնի է . իսկ ականջը այնչափ պղտիկ է , որ հազիւ կրնայ տեսնուիլ : Ծամելքները զինեալ են քառասունէն յիառւն պղտի սայրասուր ակռաներով : Ո՞րթը մոյզ կապոյտ գոյն ունի . ասոր տակը բառական հաստութեամբ կարդ մը ձերմակ